Հաստատում եմ

Վանաձորի Պ. Սևակի անվան թիվ 30 հիմնական դպրոցի

մանկավարժական խորհրդի 2023 թ N նիստով

Մանկխորհրդի նախագահ Լ. Բաբայան

# «ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՆԱՁՈՐԻ Պ. ՍԵՎԱԿԻ ԱՆՎԱՆ N 30 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

## Տնօրենի տարեկան աշխատանքային պլան

## (2023-2024 ուստարի)

# ԱՌԱՋԻՆ ԲԱԺԻՆ

## ԴՊՐՈՑԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՂ

## ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՎԱՐՈՒՄԸ

| հ/հ | Աշխատանքի բովանդակությունը | Կատարման ժամկետը | Նշումներ |
|---|---|---|---|
| 1. | Դպրոցում առկա աշակերտաթվով կազմել 2023-2024 ուստարվա կոմպլեկտավորումը: | 01.09.2023թ | |
| 2. | Մանկավարժական խորհրդի որոշման հիման վրա հաստատել 2023-2024 ուստարվա դպրոցի ուսումնական պլանը: | 31.08.2023թ | |
| 3. | Հաստատել 2023-2024 ուստարվա<br>մանկխորհրդի կազմը<br>առարկայական մասնախմբերը՝ ղեկավարներով<br>փոխտնօրենների, կազմակերպչի, ուսուցչի օգնականի պարտականությունները՝ ըստ աշխատանքի բաժանման(հիմքում պաշտոնեական,կանոնադրական պարտականությունները)<br>հերթապահության կարգը<br>ուստարվա միջոցառումների պլանը<br>I կիսամյակի դասացուցակը<br>տնօրենի տեղակալների տարեկան աշխատանքային պլանները<br>առարկայական մասնախմբերի տարեկան | 2023թ օգոստոս | |

| | | | |
|---|---|---|---|
| | աշխատանքային պլանները<br>դասղեկների տարեկան աշխատանքային պլանները<br>գրադարանավարի  տարեկան աշխատանքային պլանը<br>խմբակների ծրագրերը | | |
| 4. | Իրականացնել  վերահսկողություն<br>պլանավորված աշխատանքների կատարման<br>հաճախումների, ուսուցիչների բաց թողած դասաժամերի հաշվառման և դրանց փոխարինման ու  լրացման գործընթացի<br>էլեկտրոնային մատենավարության | ամիսը 1 անգամ | |
| 5. | Կատարել    2022-2023 տարվա ներքին գնահատումը | օգոստոս | |
| 6. | Կազմել  հաշվետվություններ<br>նախորդ ուստարվա  աշխատանքների<br>ուսումնադաստիարակչական և ֆինանսատնտեսական գործունեության  վերաբերյալ | ուստարվա ավարտ | |
| 7. | Կատարել  լիազոր մարմնի կողմից օրենքով նախատեսված  կարգով  արվող  հրամանները, հրահանգները | տարվա ընթացքում | |
| 8. | Կազմվել<br>տարիֆիկացիոն ցուցակը<br>հաստիքացուցակը<br>նախահաշիվը | | |

| | | | |
|---|---|---|---|
| 9. | Կազմել 2024 թ ֆինանսական տարվա բյուջետային օրացույցը և առաջնորդվել նշված օրացույցով | սեպտեմբեր դեկտեմբեր | |

# ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԻՆ

## ՊԱՐՏԱԴԻՐ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՄ

| հ/հ | Աշխատանքի բովանդակությունը | Կատարման ժամկետը | Նշումներ |
|---|---|---|---|
| 1. | Նոր ուսումնական տարին, ուսումնական գործընթացը սկսելու համար դպրոցում ստեղծել ջերմ մթնոլորտ | ուստարվա ընթացքում | |
| 2. | Դպրոցի սպասարկման տարածքում հաշվառել 6 տարեկան երեխաներին: Սահմանված կագով կազմակերպել առաջին դասարանցիների առցանց հայտագրումն ու գրանցումը: | հունիս օգոստոս | |
| 3. | Ձեռք բերել նախապես պատվիրված դասագրքերը և դպրոցում առկա դասագրքերի հետ սահմանված կարգով կատարել դասագրքերի բաշխումը: | օգոստոս սեպտեմբեր | |
| 4. | Հաստատել աշխատանքային կարգապահության կանոնները: | օգոստոս սեպտեմբեր | |
| 5. | Խիստ վերահսկողություն սահմանել ուշացումների և անհարգելի բացակայությունների նկատմամբ, ժամանակին կանխել դրանք: | Տարվա ընթացքում | |
| 6. | Ուշադրության կենտրոնում պահել դժվար առաջադիմող աշակերտներին: Հաճախակի ստուգել նրանց հետ տարվող աշխատանքները: | Ուսումնակ | |

| | | | |
|---|---|---|---|
| | Երկարօրյա ուսուցման կազմակերպում: | ան տարում | |
| 7. | Իրականացնել 9-րդ դասարանի աշակերտների ավարտական քննությունների նախապատրաստումը և և բարձր մակարդակով քննությունների կազմակերպումը: | ուստարվա ընթացքում | |
| 8. | Մշտական վերահսկողություն իրականացնել աշակերտական ուշացումների և բացակայությունների նկատմամբ, կազմակերպել անհրաժեշտ հաշվառում | ուստարվա ընթացքում | |
| 9. | Պարտադիր ուսուցման գործընթացի իրագործմանը մասնակից դարձնել ծնողներին, ծնողական խորհրդին: Աշխատանքներ տանել դժվար դաստիարակվող երեխաների հետ՝ պարբերաբար մասնակից դարձնելով նաև նրանց ծնողներին: | ուստարվա ընթացքում | |
| 10. | Հետևողական համակարգված աշխատանք տանել օժտված և շնորհալի աշակերտների հետ առարկայական օլիմպիադաներին և ուստարվա ընթացքում անցկացվող մյուս մրցույթներին պատրաստվելու և բարձր մակարդակով մասնակցելու համար: | ուստարվա ընթացքում | |
| 11. | Հետևողական աշխատանք տանել հիմնական կրթության անշեղորեն կենսագործման համար: Սահմանված կարգով կազմակերպել դպրոցից դպրոց սովորողների տեղափոխության գործընթացը: | ուստարվա ընթացքում | |
| 12. | Առարկայական մասնախմբերի հետ համատեղ մշակել և իրականացնել կրթական պետական չափորոշիչներով նախատեսված միջոցառումներ դպրոցի սովորողների գիտելիքների , կարողությունների ու հմտությունների նվազագույն | ուստարվա ընթացքում | |

| | | | |
|---|---|---|---|
| | առաջին աստիճանի ապահովման համար: | | |
| 13. | Դպրոց ընդունված երեխաներին ծանոթացնել դպրոցի ներքին կարգապահական կանոններին, գործող ռեժիմին, ինչպես նաև իրենց իրավունքներին ու պարտականություններին: Ստեղծել ջերմ մթնոլորտ ուսումնական գործընթացը բարեհաջող սկսելու համար: | ուստարվա ընթացքում | |
| 14. | Կատարել ծնողազուրկ և սոցիալապես խիստ անապահով ընտանիքներից դպրոց հաճախող երեխաների հաշվառում և հնարավորությունների սահմանում նրանց օգնել դասագրքերով և գրենական այլ պիտույքներով: | սեպտեմբեր | |
| 15. | Համակարգված աշխատանքներ տանել սովորողների կրթության որակի բարձրացման ուղղությամբ: | ուստարվա ընթացքում | |

# ԵՐՐՈՐԴ ԲԱԺԻՆ

## Աշխատանք մանկավարժական աշխատողների հետ

| h/h | Աշխատանքի բովանդակություն | Կատարման ժամկետ | Նշումներ |
|---|---|---|---|
| 1 | Նշանակել դասղեկներ, մասնախմբերի ղեկավարներ: | 20.08.-15.09 | |
| 2 | Անցկացնել մասնախմբերի ղեկավարների սեմինար խորհրդակցություն: Նրանց ծանոթացնել մասնախմբերի կանոնադրությանը, որոշել հետագա անելիքները: | ուսումնական տարում | |
| 3 | Պլանավորել մասնախմբերի գործունեությունը: | սեպտեմբեր | |
| 4 | Ուսումնասիրել առաջավոր աշխատանքի փորձը և տարածել դպրոցում: | ուսումնական տարվա ընթացքում | |
| 5 | Դասալսումների միջոցով մեթոդական օգնություն ցույց տալ մանկավարժներին: | ուսումնական տարվա ընթացքում յուր. ուսուցչին առնվազն 2 անգամ | |
| 6 | Կազմակերպել սկսնակ ուսուցիչների ստաժավորման գործը նրանց կցել որակյալ ուսուցիչների հետ: | ուսումնական տարվա ընթացքում | |
| 7 | Ուսուցիչներին հաղորդակից դարձնել գիտության և մանկավարժության նորագույն նվաճումներին: | ուսումնական տարվա ընթացքում | |
| 8 | Ուսուցիչներին ծանոթացնել ՀՀ կառավարության որոշումներին, գիտության | ուսումնական տարվա ընթացքում | |

| | | | |
|---|---|---|---|
| | ու կրթության նախարարության հրահանգներին , հրամաններին և այլ նորմատիվ փաստաթղթերին: | մանկավարժական խորհրդի նիստի ժամանակ | |
| **9** | Պլանավորել մանկավարժական խորհրդի գործունեությունը: | 01.09.2023 | |

# ՉՈՐՐՈՐԴ ԲԱԺԻՆ

## <u>Ուսումնադաստիարակչական աշխատանքների</u>

## <u>կազմակերպում</u>

| **h** | **Աշխատանքի բովանդակություն** | **Կատարման ժամկետ** | **Նշումներ** |
|---|---|---|---|
| 1 | Ուսուցիչներին ժամանակին ապահովել ուսումնական ծրագրերով: | սեպտեմբեր | |
| 2 | Աշխատանք տանել աշակերտներին դասագրքերով և գրենական պիտույքներով ապահովելու ուղղությամբ: | սեպտեմբեր | |
| 3 | Սովորողների գիտելիքների որակը բարելավելու նպատակով կատարել դասալսումներ, արդյունքները քննարկել մասնախմբերի նիստերում տնօրենին կից խորհրդակցություններում, մանկխորհրդի նիստերում: | ուսումնական տարվա ընթացքում | |

| | | | |
|---|---|---|---|
| 4 | Մասնախմբերի օգնությամբ ուսումնասիրել առարկաների դասավանդման վիճակը և արդյունքները քննարկել մասնախմբերի նիստերում տնօրենին կից, խորհրդակցություններում, մանկխորհրդի նիստերում: | ուսումնական տարվա ընթացքում | |
| 5 | Ուսումնասիրել լաբորատոր գործնական աշխատանքների վիճակը, ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության դասերին: | ուսումնական տարվա ընթացքում | |
| 6 | Անցկացնել դպրոցական օլիմպիադաներ: | ըստ ժամանակացույցի | |
| 7 | Մշտական ուշադրության կետրոնում են եղել օժտված երեխաները:Պատշաճ կերպով կազմակերպվել են օլիմպիադաներ ու այլ դպրոցական մրցույթներ: | ուստարվա ընթացքում | |
| 8 | Հետևել <<emis>>-ի աշխատանքներին: | շաբաթը 1 անգամ | |
| 9 | Կիսամյակի ընթացքում առնվազն երկու անգամ բոլոր առարկաներից կազմակերպել թեմատիկ ստուգումներ տնօրենության ներկայացուցչի կամ մ/մ մասնախմբի ղեկավարի մասնակցությամբ: | ուս. տարվա ընթացքում | |

| | | | |
|---|---|---|---|
| 10 | Ուսումնական առարկաների դասավանդումը բարելավելու նպատակով ուսուցումը կազմակերպել (հնարավորության դեպքում )կաբինետային համակարգով | ուստարվա ընթացքում | |
| 11 | Հետևողական աշխատանք տանել աշակերտների գեղագիտական դաստիարակության գործի բարելավմանուղությամբ: | ուստարվա ընթացքում | |
| 12 | Սովորողնեի օգնությամբ ձևավորել շենքի միջանցքներն ու կաբինետները, կազմակերպել գեղարվեստական օլիմպիադաներ, հաշվետու համերգներ: | ուստարվա ընթացքում | |
| | **ՌԱԶՄԱՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ** | | |
| 13 | Կազմակերպել հանդիպումներ հայկական բանակի հրամանատարների, Արցախի ինքնապաշտպանական մարտերի մասնակիցների հետ | ուստարվա ընթացքում | |
| 14 | Կազմակերպել այցելություն անկախության, Հայաստանի սահմանների պաշտպանության համար զոհված մարտիկների հուշարձաններին: | ուստարվա ընթացքում | |

| | | | |
|---|---|---|---|
| 15 | Անցկացնել ցուցադրական պարապմունք <<Քաղաքացիական պաշտպանության օրը դպրոցում>> միջոցառումը: | ուստարվա ընթացքում | |
| 16 | Ուստարվա ընթացքում ապահովել մշտական համագործակցություն դպրոցին կցված զինվորական ստորաբաժանումների հետ: Կազմակերպել փոխադարձ այցելություններ: | ուստարվա ընթացքում | |
| 17 | Զևավորել ՆԶՊ-ի կաբինետը նոր պաստառներով,մատաղ սերնդի հայրենասիրության ոգին բարձրացնելու նպատակով կազմակերպել արշավներ և զբոսյցներ: | ուստարվա ընթացքում | |
| | **ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ** | | |
| 18 | Աշակերտների ֆիզիկական դաստիարակության բարելավման նպատակով մարզադահլիճը հնարավորության պայմաններում հարստացնել մարզական գույքով: Թարմացնել դպրոցի սպորտային հրապարակը: | ուստարվա ընթացքում | |

# ՀԻՆԳԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ

## Ներդպրոցական վերահսկողություն

| h | Աշխատանքի բովանդակություն | Կատարման ժամկետ | Նշումներ |
|---|---|---|---|
| 1 | Յուրաքանչյուր ամսվա վերջում հանրագումարի բերել սովորողների ուշացումներն ու բացակայությունները և արդյունքները քննարկել տնօրենին կից խորհրդակցություններում: | յուրաքանչյուր ամսվա վերջում ամբողջ տարվա ընթացքում | |
| 2 | Ստուգել հիմնական պարտադիր կրթության օրենքի կատարման վիճակը դպրոցում՝ ելնելով հանրակրթական հաստատության կանոնադրության պահանջներից և արդյունքները քննարկել տնօրենին կից խորհրդակցություններում: | ուսումնական տարվա ընթացքում | |
| 3 | Ստուգել ավարտական դասարանների սովորողների գիտելիքների որակի համապատասխանությունը պետական չափորոշիչներին ու նորմերին: | 2-րդ կիսամյակների ավարտին | |
| 4 | Ստուգել լաբորատոր և գործնական աշխատանքների կատարումը քիմիայի, ֆիզիկայի, կենսաբանության դասերին: | ուսումնական տարվա ընթացքում | |

# ՎԵՑԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ

## Աշխատանք ծնողների հետ

| h | Աշխատանքի բովանդակություն | Կատարման ժամկետ | Նշումներ |
|---|---|---|---|
| 1 | Ձևավորել դպրոցի ծնողական խորհուրդ և քննարկել դպրոցի առջև դրված համատեղ լուծման ենթակա հարցեր: | 15.09.-20.09 | |
| 2 | Պլանավորել ծնողական խորհրդի աշխատանքները: | 20.09.2023 | |
| 3 | Կոորդինացնել ծնողական խորհուրդի գործունեությունը: | սեպտեմբեր ամսվա ընթացքում | |
| 5 | Ապահովել դպրոցի և ծնողների համատեղ գործունեությունը սովորողների ուսուցման և դաստիարակության բարելավման համար: | ուսումնական տարվա ընթացքում | |